7033

281
U-34

1910

04 NOV 2009

Ի՞նչ կ'ըսէ
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

"Բաց ոչ Գոց" ի խնդրոյն առթիւ

Ա. ԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎՈՑ ՄԷՋ ԱՐՏԱՍԱՆԱԾ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ.

ՎԱՐՁԱԿԱՆ ՕՐԻՆԱՁԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՏԵՐՈՒ ՄԷՋ ԳԱՑԹԱԿՂԱԼԻՑ

ՁԵՂԾՈՒՄՆԵՐ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
Մաքրագործումը եւ Վերակազմութիւնը

Գրեց Յովհաննէս Մարգարեան
ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆԻՉ
Հալէպի եւ Ատանայի Կուսակալութեանց

Տպարան եւ Գրատուն Յ. Գ. ՓԱԼԱԳԱՆԵԱՆ
Կ·ՊՈԼԻՍ, ՄԵԾ ՆՈՐ ԽԱՆ, ԹԻՒ 55
1910

281

Ի՞նչ կ՚ընէ
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

“Բաց ոչ Գոց„ի խնդրոյն առթիւ

Ա. ԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎՈՑ ՄԷՋ ԱՐՏԱՍԱՆԱԾ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՏԵՐՈՒ ՄԷՋ ԳԱՑԹԱԿՂԱԼԻՑ

ԶԵՂԾՈՒՄՆԵՐ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Մաքրագործումը եւ Վերակազմութիւնը

Գրեց Յովհաննէս Մարգարեան

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆԻՉ

Հալէպի եւ Աստանայի Կուսակալութեանց

Տպարան եւ Գրատուն Յ. Գ. Փալադաշեան

Կ·ՊՈԼԻՍ, ՄԵԾ ՆՈՐ ԽԱՆ, ԹԻՒ 55

1910

25 JUN 2013

281
Г-34

Ի՞նչ կ'ըսէ
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

"Բաց ոչ Գոց" ի խնդրոյն առթիւ

Ա. ԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎՈՑ ՄԷՋ ԱՐՏԱՍԱՆԱԾ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐՁԱԿԱՆ ՕՐԻՆԱՁԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՏԵՐՈՒ ՄԷՋ ԳԱՑԹԱԿՂԱԼԻՑ

ՁԵՂԾՈՒՄՆԵՐ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
Մաքրագործումը եւ Վերակազմութիւնը

Գրեց Յովհաննէս Մարգարեան
ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆԻՉ
Հալէպի եւ Աստանացի Կուսակալութեանց

Տպարան եւ Գրատուն Յ. Գ. Փալագեանեան
Կ·Պոլիս, Մեծ Նոր Խան, թիւ 55
1910

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
65499-67

Դուրեան Պատրիարքին

Ազգ. Ժողովոյ 23 յուլիս 1910 նստին մէջ ըրած

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Սրբազան, կ'ըսէք թէ «Յանուն Ազգ. Ժողովոյ և յանուն Ազգին ցաւ կը յայտնեմ Իզմիրի դէպքին, անոր համար որ մենք պատճառ եղանք այս դէպքին՝ դժբաղդաբար բիժացութիւններով. և երբ մենք չենք կրնար զիրար հակնալ, ի՞նչպէս պիտի սպասենք որ ժողովուրդը չը գժտի»։

Սրբազան, Ձեր ցաւ յայտնած Իզմիրի արիւնհեղութեան դէպքին չարժառիթը՝ միայն եկեղեցեաց մէջ ատենախօսութեանց խնդիրն ըլլալով, սոյն խնդրոյն այս աստիճանի յանգելուն պատճառները քննելու և պարզելու հարկ տեսայ։

Իզմիրլեան կաթողիկոս՝ իր վերջին անդամ Կ. Պոլսոյ Պատրիարքութեանը ատեն՝ եկեղեցիները անխտրաբար ատենախօսութեանց առջև բաց ձգելու մասին հրատարակած կոնդակին հակառակ՝ կուսակցական և քաղաքական ատենախօսութիւնները արգիլելու ըստ օրինի իրաւասութիւն չունէր։ Այս արգելքով, ինչպէս իր վերոյիշեալ կոնդակովը, եկեղեցիներու մէջ ատենախօսելը կրօնի և Հաւատոյ հակառակ չըլլալը՝ սկզբանէ

և հինգապէս ընդունած է։ Հետեւաբար իր արդիւնք ատենախօսութիւններն ալ կրօնի հակառակ չեն, և այս խնդրոյն մէջ իր միջամտութիւնը միահեծանութեան ձգտում մ'է իր կողմէն և բոլորովին հակառակ է՝ իր իսկ՝ երկու անգամ Պատրիարքութեանը առթիւ ճշմարտապէս գործադրութեանը հսկելու ուխտած Սահմանադրութեան ոգւոյն. այս իսկ պատճառաւ Ազգ. Ժողովը պարտաւոր էր մերժել վերոյիշեալ կոնդակը։

Խառն Ժողովն ալ՝ եկեղեցիները ատենախօսութեանց առջև բաց ձգելու մասին կանխապէս միաձայնութեամբ տուած որոշումը՝ ինքնին աւրելու և հակառակ որոշում տալու իրաւասութիւն չունենալուն պատճառաւ, իր նախորդ որոշման վրայ պնդելէն զատ ուրիշ օրինական ճամբայ չունէր. մինչդեռ այս կարեւոր կէտը ի նկատի չառնելէն զատ՝ իր իրաւասութենէն վեր սաւառնելով՝ Հայր. Կոնդակին գործադրութիւնը հրամայող Ազգ. Ժողովոյ որոշումը ջնջած և եկեղեցիները խաղաղ գոցելու ըմբոստ որոշումը տուած է։

Սրբազա՛ն, Ձեր յայտնած դէպքին պատասխանատուութիւնը՝ Ա. Ձեր, Բ. Խառն Ժողովոյ վրայ կը ծանրանայ։ Բացատրենք։

Դուք կաթ. Կոնդակին գործադրութիւնը հրամայող Ազգային Ժողովոյ տուած անփոփոխելի որոշումը անմիջապէս և ուղղակի չրջաբերականաւ գործադրելու օրինական պարտաւորութիւններդ անդիտանալով, դժբաղդաբար Խառն Ժողովոյ յանձնած էք զայն։ Իսկ սա, փոխանակ յիշեալ Կոնդակը նոյնութեամբ գործադրելու պէտքն իմացնելով՝ զայն Ձեզ վերադարձնելու, Ձեր աչքին առջև իր իրաւասութեան սահմանէն դուրս ելելով՝ գործադրութիւնը անհրաժեշտ համարեալ յիշեալ որոշման ոգւոյն դէմ՝ եկեղեցիները խաղաղ գոցելու ապօրինի խորհրդակցութեան ձեռնարկած միջոցին, Դուք, Սրբազան, պարտաւոր էիք, իբր Սահմանադրութեան ճշմարտապէս գործադրութեանը հսկելու ուխտեալ ընդհանուր Դատախազ, ազդուսակէս գիտել տալ թէ՝ Ազգ. Ժողովոյ որոշման հակառակ որ և է խորհրդակցութիւն՝ Խառն Ժողովոյ իրաւասութենէն վեր ըմբոստութիւն մ'է։ Ընդհակառակը Ձեր Սրբազնութիւնը անտարբեր հանդիսատես կը մնայ Օրէնքին ոտնակոխ ելլալուն։

Սրբա՛զան, Դուք Խառն Ժողովոյ սոյն ապօրէն որոշումը անյապաղ Ազգ. Ժողովոյ մատուցանելով՝ անոր բեկանումը պահանջելու պարտաւոր էիք, սակայն դժբաղդաբար Ձեր պաշտօնին գիտակցութիւնը չունենալնուդ պատճառաւ՝ ո՛չ միայն զայդ չէք ըրած, այլ սոյն ընդդիմադիր որոշումը նոյնութեամբ գործադրութեան ալ դրած և ասով թէ՝ Սահմանադրութիւնը և թէ՝ Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ հեղինակութիւնը ոտնակոխ ըրած և արիւնհեղութեան և այլ քստմնասարսուռ եղելութեանց տեղի տուած էք։

Այս տեղ «թիւրիմացութիւն» չի կայ. Ձեր օրինագիտութիւնն է միայն որ ժողովուրդը կը գժտեցնէ...

Կ'ըսէք. «Եթէ Պատրիարք և վարչութիւն կայ, անոր համեմատ շարժինք, իսկ եթէ ո՛չ Պատրիարք և ո՛չ վարչութիւն կայ, ըսէք մեզի, որ անիշխանութիւն հրատարակենք»։

Սրբազա՛ն, երբ Խառն Ժողովը իր իրաւասութենէն դուրս ելնելով՝ Ազգ. Ժողովոյ որոշումը աւրած ելլալը Ատենապետ Տօքթէօր Սեղբոսեան էֆէնտին բա-

ցարձակապէս յաւէնի Ազգ. Ժողովոյ կը խոստովանի, և Դուք՝ իբր ուխտակալ հոկող՝ անտարբերութիւն ցուցընելով Խառն Ժողովոյ վերջին որոշումը կը գործադրէք,

Երբ, առանց զՁեզ ընտրող Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ գիտութեանը, Նորա ստորադասեալ Քաղաքական Ժողովոյ մէկ երկու անդամին թելադրութեանը խարուելով՝ հրաժարական կուտաք և վեց ամիս Ղարուանակ Ձեր մասնաւոր բնակարանին մէջ անցուցած Ձեր անաչխատ կեանքին համար ինքնարերաբար Ազգ. սրնտուկէն թոչակ կ'ստանաք, և միանգամայն ձեր հոգևոր ծնող Իրմիրլեան Կաթողիկոսին իսկ մինչև Կ. Պոլսէ մեկնման թուականը Պատրիարքութեան յատկացեալ 50 ական ոսկի ամսականները ըստ հաճոյս կը հատուցանէք,

Երբ, քաջ գիտնալով հանդերձ որ Սահմանադրութիւնը առանց բանաւոր պատճառի միմիայն երեք անդամ բացակայող ժողովական մը հրաժարեալ կը համարի, Դուք անտարբեր աչօք կը տեսնէք Դատաս. Խորհուրդին ինքն իրեն չնորհած ամառնային եռամսեայ դադարը և պատասխանատու չէք բներ նոյն Խորհուրդը և անոր քմահաճոյից խաղալիկ կը դարձնէք այն Օրէնքը որուն գործադրութեանը ուխտ ըրած էք,

Երբ Դուք, Պատրիարք և Վարչութիւն, Օրէնքը ոտնակոխ և խաղալիկ կ'ընէք և զեղծումներ կը գործէք, ամենայն իրաւունքով կը համարձակիմ գիտել թէ Պատրիարքի և Վարչութեան չգոյութիւնը աւելի նախամեծար պիտի ըլլար քան այս ողբալի և դայթակղալի վիճակը։

Սրբազան, աւելորդ կը համարիմ այստեղ աւելի ապացոյցներ յառաջ բերել՝ հաստատելու համար թէ ձեր

նկատել ուզած անիշխանութիւնը՝ Ձերդ Սրբազնութեան Պատրիարքական գահը բարձրանալէն ի վեր՝ տիրապետել սկսած է, և Դուք Ձեր ընթացքովը՝ արդէն անօրէնութիւնը և անիշխանութիւնը հրատարակած էք։

Սրբազա՛ն, կ'ըսէք թէ «Հրապարակի վերայ ամէն կողմէն զիս իբր թոյլ Պատրիարք ամբաստանեցին և օտար թերթերն ալ այսպէս զիս ճանչցուցին, որովհետև երկու սուրի մէջ էի, չէի կրնար գոնացում տալ, կ'աղաչեմ, ըսէ՛ք, այս դիրքին մէջ գտնուող մարդ մը ի՞նչ կրնայ ընել։»

Սրբազա՛ն, աղէկ որ հանրութիւնը զՁեզ իբր թոյլ Պատրիարք ամբաստանած ըլլալը Ձեր բերնովն իսկ պարզմտարար կը խոստովանիք, սակայն ապահով եղիք որ ժողովուրդը միմիայն քաղաքավարութեան համար Ձեզի պատկանեալ անկարող բառին տակը թոյլ բառը գործածած է. Դուք իբր կղերական «Զայն բազմաց ձայն Աստուծոյ»ն աղէկ կը հասկնաք...։

Սրբազան, զՁեզ չփոթեցնող երկու սուրերէն մին՝ Ատենախօսութեանց մասին կաթ. կոնդակին գործադրութիւնը հրամայող Ազգային ժողովոյ որոշումն, իսկ միւսը՝ սոյն որոշման ոգւոյն դէմ՝ Խառն Ժողովոյ վերջին ապօրէն և ըմբոստ որոշումն է։

Դուք, Սրբազան, Ազգ. Ժողովոյ որոշումը անփոփոխելի և անբռնաբարելի և իր ստորադաս Խառն Ժողովոյ որոշումէն աւելի նախամեծար ըլլալը հասկնալո՞ւ կարողութիւնը չունիք եղեր որ, սոյն վերջնոյն ապօրէն և արտաքոյ որոշումը նախապատիւ համարելով գործադրութեան դրիք և երկպառակութեան տեղի տալով արիւն հոսեցնել տուիք...

Դուք, Սրբազան, օրինաց ճամբէն չեղեալնուդ հա-

մար է որ երկու սուրի մէջ ձգած էք ինքզինքնիդ, զի եթէ այսօր Ազգ· ժողովը Խառն ժողովոյ որոշումը բեկանէ, այն ատեն կը յաղթանակէ միայն Օրինաց սուրը և Դուք կ'ազատիք սուրերու պաշարման վիճակէն·····

Կ'ըսէք թէ «Կը խնդրենք անոնցմէ որոնք Վարչութեան հակառակ չարժիլ կ'ուզեն, անոր գործերուն չեն հաւնիր, զայն կը քննադատեն, օրինաւորութեան սահմանին մէջ ընեն, ոչ թէ բաւականանան «անոնք արժանի չեն» ըսելով. քննադատել օրինաւոր է, բայց բանաւոր չէ Ազգ· իշխանութեան անսաստելը»։

Սրբազան, երբ Խառն ժողովը իրմէն բարձրագոյն Ազգ· ժողովոյ որոշումը կ'աւրէ և անոր դէմ կ'ըմբոստանայ, երկպառակութեան և եղբայրասպանութեան և այնու Ազգ· ժողովոյ և Ազգին արժանապատուութիւնն ալ ոտնակոխ ընող խայտառակութեանց տեղի կուտայ։

Երբ Երուսաղէմայ Միաբանութեան Ընդհանուր ժողովէն իբր գող և աւազակ ամբաստանեալ փախստական ութն վարդապետներն Երուսաղեմատան մէջ հիւրասիրուելէ ետք՝ առանց հարցաքննուելու Երուսաղէմ զրկուելով պաշտօնի կ'անցուին, և երբ գողոնը ձեռքը բռնուած և Եգիպտական կառավարութեան կողմէ ընդհակոդութեամբ զրկուած և Խառն ժողովոյ Հարցաքննիչ Մասնաժողովին ներկայութեանը իր գողութիւնը խոստովանած ուրարակիրը նոյնպէս Երուսաղէմատան մէջ հիւրասիրուելէն ետքը՝ փախչելուն տեղի կը տրուի, մինչ ընդհակառակը Երուսաղէմէն՝ իբր Ազգ· իշխանութեան դէմ ըմբոստ հռչակեալ կարապետ վարդապետն և իր ընկերները՝ Վանքին և Ազգին պատիւն ոտնակոխ ընելու աստիճան խայտառակ պաշարումէ յետոյ, ձերբակալեալ վիճակի մէջ բերուելով՝ ներքին և արտաքին յարաբերութիւններէ իսկ զուրկ՝ Հիւանդանոցի մէջ առանց իրաւասութեան և միանգամայն առանց որևէ ապացոյցի և հակառակ Օրինաց իբր ոճրագործ հինգ ամիս կը բանտարկուին,

Երբ Իզմիրլեան կաթողիկոս, երկու անգամ կ· Պոլսոյ Պատրիարքութեանը առթիւ ճշմարտապէս գործադրութեանը հսկելու ուխտած Ազգ· Սահմանադրութեան հոգւոյն հակառակ, Իտիրնէի և Վանայ առաջնորդութեանց մասին ուղղակի ըրած տնօրէնութիւնները Դուք առանց առարկութեան ընդունելով կը գործադրէք և այսպէս Սահմանադրութեան հիմը կը քանդէք, Ազգը իրաւունք չունենա՞ր արդեօք, Սրբազա՛ն, թէ՛ զՁեզ և թէ՛ Խառն ժողովն ո՛չ միայն քննադատելու, այլ և հրաժարեցնելով՝ դատի և պատասխանատուութեան իսկ ենթարկելու։

Սրբա՛զան, կ'ըսէք թէ «Որ և է մարմնոյ վրայ մի ծանրացնէք պատահած և պատահելիք դէպքերուն պատասխանատուութիւնը. ա՛լ պատասխանատու չկայ»։

Սրբազան, այս Ձեր բաց դէպքերն երկնային պատուհասի և φοru մաժեսդի արդիւնք չեն որ պատասխանատու չունենան։ Այս դէպքերուն պատճառ տուողներն նախ Դուք, երկրորդ՝ Խառն ժողովն եղած ըլլալնիգ կանխապէս զգալնո՞ւդ համար է որ զՁեզ չքմեղացնելու համար Ազգային ժողովոյ ներողամտութիւնը կը հայցէք, «դէպքին պատասխանատուութիւնը որևէ մարմնոյ վերայ մի՛ ծանրացնէք, պատասխանատու չկայ» ըսելով։

Կ'աղաչենք, Սրբազան, ըսէք մեզի, ուրիշ ի՞նչ բան զՁեզ կը սիրեցնէ այս Իզմիրեան արիւնհեղութեան պատասխանատուները հետապնդելու խնդիրը մինչեւ

աղբը ընկէն Ազգ· ժողովէն խնդրելու։

Սրբազան, Դուք Ձեր բանախօսութեան սկիզբը Իզմիրեան դէպքին պատճառը մենք եղանք ըսած էք, և քիչ յետոյ «սոյն դէպքին պատասխանատու չկայ» ըսելով պատգամ կուտաք. այս ի՞նչ տեսակ հակասական և անհասկնալի բանախօսութիւն է որ կ'ընէք···։

Սրբազան, կ'ըսէք թէ «Մի՛ թոյլ տաք որ հակա-«սական դիրք մը ստեղծուի ինձի, այսօր իբր Վարչու-«թեան Նախագահը՝ այսինչ խնդրին համար չրջաբերա-«կան մը ստորագրող, վաղը՝ իբր Ազգային Ժողովոյ «Նախագահ՝ անոր հակառակ որոշում մը վաւերացնող»։

Սրբազա՛ն, Դուք Ձեր նախագահած Խառն և Ազգ· Ժողովոյ մէջ ի՞նչ կարծիք միայն կրնաք յայտնել, և եթէ համամիտ և միաձայն չը գտնուիք, այս մասին Ձեր դիտողութիւնը նշանակելով կրնաք ստորագրել։ Ուստի եթէ երբէք սոյն երկու ժողովներն միևնոյն խնդրոյ մէջ իրարու հակառակ որոշում տան, Ձեզ երբէք հակասական դիրք չստեղծուիր։

Սրբազան, եթէ վաղը Ազգ· ժողովն՝ Խառն ժողովոյ երկպառակութեան և արիւնհեղութեան որոմը յանող ըմբռստ որոշումը բեկանէ, Դուք Ձեր կարծիքը միայն յայտնելու և ժողովոյ մեծամասնութեամբ տուած որոշումը գործադրելու պարտաւոր էք ըստ օրինի. Օրէնքը որոշումները միայն գործադրելու և ո՛չ թէ վաւերացնելու իրաւունք տուած է Ձեզ· որոշում վաւերացնելու իրաւունքը ո՞ր օրէնքէն ստացեր էք, որ ելեր ի զուր կը պաղատիք որ ժողովականներն զՁեզ հակասական դիրքի մէջ չձգեն։

Սրբա՛զան, ալ տարակոյս չը մնաց որ Դուք օրէնքին ոգին ցարդ չէք կրցած ըմբռնել և Երեսփոխանաց

«զիս հակասութեան մէջ մի՛ ձգէք» ըսելով՝ պահանջած էք որ Խառն ժողովոյ ընդհանուր որոշումը անմիջապէս բեկանելու պարտաւորութիւնն չը գործադրեն, հակառակ այն հանդիսաւոր ուխտին զոր ըրած էք՝ Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը հսկելու համար։ Ի՞նչպէս չապշինք և չը զարմանանք···

Սրբա՛զան, Ազգը ենթակայ եղած տագնապալի կացութենէն փրկելու հա՛մար հաշտութիւն կ'առաջարկէք։

Մենք վստահ ենք որ երբ Ազգ· Ժողովն՝ Ազգը երկպառակութեան և արիւնհեղութեան մղող Խառն ժողովոյ ըմբռստ որոշումը բեկանէ, այլևս երկպառակութեան խնդիր չը մնար, սակայն խիստ ցաւալի է որ փոխանակ օր առաջ սոյն տնօրէնութիւնը Ազգային ժողովոյ ընել տալու, ի զո՛ւր հաշտութիւն և ժողովին եռամսեայ դադար առաջարկած էք։

Կ'ըսէք նաև թէ «Այս անգամ ալ Ազգ· իշխանութիւնը ոտնակոխ չըլլայ, ուրիշները որոշում մը կայ»։ Անշուշտ, Ձեր «ոտնակոխ չ'ըլլայ» ըսած Ազգ· իշխանութիւնը Խառն Ժողովն է, և Ձեր ակնարկած որոշումն ալ՝ նոյն ժողովոյ որոշումն է։ Խառն ժողովն իր սոյն հոչակաւոր և ապօրինի ըմբռստ որոշումովն՝ իրմէն գերադաս Ազգ· ժողովոյ որոշումը և միանգամայն Ազգ· Սահմանադրութիւնը ոտնակոխ ըրած ըլլայն, ատենապետին՝ Տօրթօս Սեդրոսեանի՝ բերանացի և պաշտօնական խոստովանութեամբը հաստատուած է։

Սրբազան, արդեօք Դուք՝ Ձեր Ազգ· իշխանութիւն համարած Խառն ժողովն և նորա որոշումը նախանձա՞ր կը նկատէք քան Ազգ· ժողովոյ որոշումն և Ազգ· Սահմանադրութիւնը, և կը ճգնիք պաշտպանել զեղծում գործող Խառն ժողովն և նորա որոշումն, և

հակառակ Ձեր ուխտին՝ չէք թողուր որ անարգութենէ փրկուի ոտնակոխ եղած Սահմանադրութիւնը։

Սրբա՛զան, կ'ըսէք թէ «Կ'ըսեն որ կոնդակէն դուրս ելեր ենք, երեք ամիս պայմանաժամ տուէք, թո՛ղ ամէն կողմէն խորհուի և Ձեր ամենուն ուզածը ըլլայ, կիրքերը դադրելով, ամէն մարդ պաղարիւնը գտնելով»։

Սրբա՛զան, դուք Երեսփոխանաց պոլ պոլ խոստումներ կ'ընէք «թող Ձեր ամենուն ուզածը ըլլայ» ըսելով· սակայն երեսփոխանաց մէկ մասը կաթող. կոնդակին գործադրութիւնը հրամայող Ազգ· ժողովոյ վճռոյն գործադրութիւնը, և միւս մասն ալ Խառն ժողովոյ յիշեալ վերջին ըմբռnus որոշման գործադրութիւնը կը պահանջեն։ Մինչև որ սոյն վերջին որոշումն օրինաց սահմանին մէջ չը բեկանուի, սոյն խնդիրը իր լուծումը չկրնար գտնել։

Սրբա՛զան, մեր խելքը չհասնիր, հասկցուցէք մեզի թէ երկու մասի բաժնուած երեսփոխանաց ամենուն ուզածը ի՞նչպէս կրնայ ըլլալ՝ եր Դուք «Ձեր ամենուն ուզածը թո՛ղ ըլլայ» կ'ըսէք։

Մինչ Խառն ժողովն իր իրաւասութենէն դուրս ելլելով և իր նախորդ որոշումը լղելով՝ Ազգ· ժողովոյ վճիռը կոխոտած ըլլալը՝ Ձեր բանախօսութենէն մի քանի վայրկեան առաջ՝ Խառն ժողովոյ Ատենապետ Տօքթօր Սեդրոսեան Էֆէնտիին յանուն ժողովոյ ըրած յայտարարութեամբ և յիշեալ այլանդակ և դայթակղալից որոշմամբ հաստատուած է, Դուք, Խառն ժողովոյ իր իրաւասութենէն դուրս եղած ըլլալուն ակներեւ և անհերքելի իրողութիւնը պարտկելով և խեղաթիւրելով, Խառն ժողովոյ վրայ պատասխանատուութիւն չէք

ուզեր ձգել և «Կ'ըսեն թէ կոնդակէն դուրս ելեր ենք» ըսելով կը բաւականանաք։

Սրբազան, ինչպէս ըսինք, մինչև որ մէջտեղ գտնուած ըմբռստ որոշումը ըստ օրինի չեղեալ չը նը-կատուի, խնդիրը չկրնար լուծուիլ, և այս լուծումն ալ միմիայն ամբողջացեալ Նիստի մը կարօտ է։ Այսչափ բան մը չկրցա՞ք հասկնալ որ ի զուր երեք ամիս մտածելու համար դադար պահանջեցիք և հակասական նոր դիրք մ'ալ ստեղծեցիք Ձեզ համար···

Սրբա՛զան, 52 երեսփոխանի ներկայութեամբ եղած Նիստին ըստ օրինի չեղեալ ըլլալն արդեօք չէ՞ք գիտեր որ, քարտուղար Հրանդ Մարգարեանի թելադրութեանը խարուելով Նպաստիցէն իրեն բաժին հանելու համար՝ այդ զեղծարար քարտուղարին նամակ գրելու ձիջանող, և այսպէս ո՛չ միայն Պատրի· Փոխանորդութիւնը, այլ և ինքզինքը կառավարելու իսկ անկարողութիւնը օրինապէս հաստատուած՝ Ձեր սիրական փոխանորդը Դաւոնդ Ծ· վարդապետին ի նպաստ Ձեր հիւսած պաշտպանողականով՝ Ձեր դիրքին ազդեցութեամբ Խառն ժողովէն կորզած անպարտութեան որոշումը հապճէպով վաւերացնել տալէդ յետոյ, Ձեր՝ արտասուալից աչերով և յուզեալ ձեւերով անհասկնալի բանախօսութեամբը երեք ամսոյ դադար պահանջեցիք և, առանց խորհրդակցութեան, միայն ժողովոյ Ատենապետէն հաւանութիւն կորզելով, Ազգ· ժողովը անել և անորոշ կացութեան մը մատնեցիք։

* * *

Սրբազան, այստեղ աւելորդ չեմ համարիր խնդրէն դուրս մի քանի պարագայներ ևս յիշել, յստակ կեր-

պով առաւել ևս ապացուցանելու համար թէ Դուք բոլորովին անյարմար և անկարող էք Պատրիարքութեան բարձր և փափուկ պաշտօնին։

Սրբազան, Դուք Ձեր անձնական և պաշտօնական հանգամանքները մէկզմէկէ զանազանելու անկարողութեամբն՝ փոխարժէքը Կիլիկիոյ որբերուն և Ազգային Հիւանդանոցին տրուելու նպատակաւ՝ Ձեր Հողուակաև-Սրինգ և կոնդակները ծախելու համար Ձեր պատրիարքական բարձր պաշտօնին ազդեցութիւնը չարաչար կիրարկելով՝ Եկեղեցիները չուկայ դարձուցիք, մինչ կրնայիք Հիւանդանոցի և Կիլիկեան որբերուն յատկացընել Ձեր հրաժարեալ վիճակի վեց ամիսներու թոշակը, զորս օրինօք առնելու երբեք իրաւունք չունէիք, և վերադարձնելու պիտի դատապարտուէիք, եթէ անաչառ և օրինաց նախանձախնդիր Ազգային Ժողով մ'ունենայինք։

Սրբազան, Դատաս. Խորհրդոյ Նախագահ Ղևոնդ Ծ. վրդ. Դուրեան և անդամ Ագրիպաս Էֆ. Դուրեան, Ձեր ազգականը և եղբայրը գտնուելնուն համար, իբր Ատենապետ՝ սոյա պաշտօնանկութիւնը պահանջելով՝ Ձերդ Սրբազնութեան մատուցած 1 յուլիս 1909 թուակիր բողոքագիրս ըստ օրինի Խաւն Ժողովին չը յանձնելով՝ մինչեւ աղբը ըրիք։

Ձեր Փոխանորդը և եղբայրն՝ Ձեր ամենազօրաւոր պաշտպանութեանը և ազդեցութեանը շնորհիւ՝ Խորհրդոյ միւս անդամներն ալ իրենց քաջելով, ինձ հետ իբր Ատենապետ չը գործակցիլը որոշած և նիստերը երեք ամիս դադրեցուցած ըլլալնին տեղեկագրեցի և ամենուն պաշտօնանկութիւնը պահանջեցի. ասոր վրայ՝ յիշեալ դատախազեալներս հակառակ օրինաց՝ վիս ա-

Ատենապետութենէն և անմիջապէս եւքն ալ «երեք անդամ բացակայ գտնուեցար» ըսելով անդամակցութենէ իսկ հրաժարեցուցին. այս ապօրէն որոշման ջնջումն և վերստին պաշտօնավարութիւնս վճռելն խնդրելով մատուցած և առ ի բացատրութիւն թէ՛ նախորդ և թէ՛ արդի Խաւն Ժողովոց կողմէ Դատաս. Խորհրդոյ յղեալ բազմաթիւ բողոքագրերուս և անհամար դիմումներուս հակառակ՝ «յիշեալ Խորհուրդն ամառուան տաքերուն պատճառաւ երեք ամիս ինքնիրեն արձակուրդ տուած և դատարանը փակած ըլլալուն հետեւանօք՝ ուղուած բացատրութիւններն և թղթերը բերել տալ անկարելի եղած ըլլալը» թէ՛ Դուք, Սրբազան, և թէ՛ Դիւանը ինձ բազմիցս յայտարարած էք։

Սրբազան, մինչ Սահմանադրութիւնը երեք անդամ բացակայ գտնուող ժողովական մը հրաժարեալ կը համարի, Դուք Դատաս. Խորհուրդն իր քմահաճոյքին և զբօսանքին համար միայն իր նիստերը երեք ամիսներ դադրեցուցած ըլլալը կը տեսնէք և անտարբեր կը գտնուիք։ Կեցցես, Սրբազան, Սահմանադրութեան անթերի գործադրութեանը հակելու համար ըրած երդումիդ չա՛տ աղէ՛կ կը կատարէք...։

Սրբազան, տարիէն աւելի է «գատ արա՛ ինձ» ըսելով յամառաբար կը յաճախեմ Ձեզ և Վարչութեան ժողովներուն։ Դուք Օրէնքը և Օրակարգը փաչավրա և զիս խաղալիկ դարձուցիք։

Դուք, Խաւն Ժողովոյ սրբակրօն արդամնե՛ր, ամէն օր պատարագ կ'ընէք և Աստուծմէ չէք վախնար. իմ դատախազեալներս և պահանջած թղթերս Ժողովի չէք բերեր, և Սրբազան Պատրիարքին խաթերը համար իր Փոխանորդը և եղբայրը կը պաշտպանէք և Օ-

բէնք և Արդարութիւն ոտնակոխ կ'ընէք։

Դուք, Դուրեան Սրբազան, Աստուծմէ չը վախցող և ի մարդկանէ չամբէցող անիրաւ դատաւորէն ալ կրկնապատիկ անխիղճ էք, զի նա վերջապէս այրիին տուած գլխացաւէն ազդուելով դատը տեսած է, մինչ Դուք, բազմիցս զՁեզ անհանգիստ ընելուս և «անիրաւ դատաւորէն աւելի անխիղճ և անզգայ և միանգամայն ուխտադրուժ» որակելուս հակառակ՝ Ձեր եղբայրը և փոխանորդը պաշտպանելու անդիմադրելի տենդէն բռնուած՝ խուլ և համր մնացիք մեր բոլոր արդար բողոքներուն դէմ։

* * *

Սրբազան, Ձեր՝ ինձ ուղղեալ 15 Սեպտ. 1910 թուակիր և 925 համար նամակն ստացայ որ կ'ըսէ թէ «Ազգ. Վարչութեան Խառն Ժողովը գոհութեամբ անդրադարձաւ որ Ձեր Ազնուութիւնը տրամադիր կը գտնուի չարունակելու Դատաս. Խորհրդոյ անդամակցութեան պաշտօնը, և հետևւաբար որոշմամբ Խառն Ժողովոյ՝ կը հրաւիրենք Ձեր Ազնուութիւնն որ հաճի ըստ առաջնոյն նուիրել իր աջակցութիւնը Դատաս. Խորհրդոյ և ներկայ գտնուիլ Անոր նիստերուն։ Հարկ չէ ըսել թէ այս մասին կարեւորը գրուած է նաև Դատաս. Խորհրդոյ Նախագահին»։

Ձեր վերոյիշեալ նամակին ակնարկած Խառն Ժողովոյ որոշումէն հասկցանք որ Դուք, Պատրիարք և Ազգ. Վարչութիւն, ձեռք ձեռքի տալով, թէ՛ յանուն օրինաց և թէ՛ անձնապէս բացած դատիս մէջ ըրած պահանջումներս բարձի թողի ընելով և խեղաթիւրելով, և Դատաս. Խորհրդոյ անդամակցութեան պաշտօնը չարունակելու փափաք միայն ինձ վերագրելով, և իբր Ձեր հոգեհատորներուն երդուեալ պաշտպան, նոցա՝ իմ դատիս նիւթ եղած օրինազանցութիւնները դիտմամբ նկատի չառնելով, Օրէնքը, Արդարութիւնը և իմ օրինաւոր դատս ձեռքերնիդ բացարձակապէս խաղալիկ և թատերական այպանելի խա՛ղ մը դարձուցիք...։

Սրբազան, ամէն անգամ որ դատս հետապնդելու համար Ձեզ և Ձեր նախագահած Ժողովոյ ներկայացայ, Դուք, համր և լուռ և անտարբեր մնացիք, և ժողովականներուն չատերն իսկ՝ փոխանակ անկողմնակալաբար իմ դատս լսելու, ինձ դէմ ատելութեան և ջղագրգռութեան և զՁեզ ինքնաբերաբար պաշտպանելու տենդէն բռնուած՝ զիս ժողովասրահէն վտարելու ձգտումներ իսկ ունեցան։

Անհերքելի իրողութիւն մ'է որ Դուք, Ձեր հոգեհատորներուն դէմ բացած դատս չլսելու երդուած և ականջնիկ խցած էք, ինչպէս որ իմ 1 Յուլիս 1909 առաջին բողոքագիրս քովերնիդ պահելով, Ժողովոյ չէք յանձնած, և Ձեր ժողովականներն ալ՝ Ձեր խաթերն համար ոչ միայն Ձեզ հետեւեցան, այլ դատիս ի՛նչ ըլլալը հասկնալ չուզելով՝ ինձ դէմ դատախազ կանգնեցան։

Սրբազան, Ձեր բռնած ընթացքին անօրէն և նորա հրապարակումը այպանելի ըլլալն արդեօք զգալմամբ է որ, Ձեր դիւանը սոյն որոշումը, ինչպէս սովոր է, մամուլին հաղորդելու քաջութիւնը չունեցաւ բացառաբար, իբր անհերթեթ և արտառոց արտադրութիւն Ձեր վարչական և մասնաւորական գործունէութեան։

Աստուա՛ծ՝ իմ, այս ինչ զգայացունց խաղ է զոր կը խաղան Պատրիարք և Ազգ. Իշխանութիւն համարեալ

ՀՍՍՀ Գրադարան
ГСС Библиотека
ZUUR-Apm.CCP

Պատկառելի Խան Ժողովն՝ Օրէնք, Արդարութիւն, Պաշտօն և Ուխտ ոտնակոխ ընելով . . . ։

* * *

Ազգ. Սահմանադրութիւնը անխախտ պահելու նուիրական պաշտօնին կոչեցեալ երեսփոխանները.

Խան Ժողովոյ վերոյիշեալ ապօրէն որոշման և ցարդ սոյն դատս մէջ ըրած օրինազանցութեանց այլևս չկարենալով հանդուրժել, կը բողոքեմ, և որովհետև Ազգ. Ժողովն իրՋ օրէնսդրական մարմին՝ դատելու և վճռելու իրաւասու դատարանի հանգամանք չունի, կը խնդրեմ որ իմ դատս օրինապէս տեսնելու և օրինազանցութիւնները պատժելու համար՝ տեսրակիս վերջաւորութեանը մէջ կազմելը առաջարկուած վճռաբեկ Դատարանը օր առաջ կազմէք, որպէս զի կարենամ անոր դիմել՝ իմ թէ՛ անձնական և թէ՛ սահմանադրական իրաւունքներս պահանջելու համար։

Եւ որովհետև տարիէ մը ի վեր բողոքիս ձայնը չկրցայ լսելի ընել ո՛չ միայն Վարչութեան, այլ և Պատկ. Ազգ. Ժողովիդ, որոյ դիւանին վրայ կը գտնուի դատս առթիւ մատուցած բողոքագիրս, հարկ համարեցի սոյն գրքոյկս թարգման կացուցանել՝ ձայնս Ձեզ հասցնելու համար։

* * *

Արբա՛զան, մինչ Ընդհ. Հայրապետն՝ եկեղեցեաց մէջ միայն կուսակցական և քաղաք. ատենախօսութիւնները, իսկ Դուք՝ Ձեր նախագահած Խան Ժողովով՝ ամէն կարգի ատենախօսութիւնները արգիլեցիք և անիրաւ տեղը արիւնհեղութեանց տեղի տուիք. ցաւալի չէ՞ արդեօք տեսնել որ լրագիրները՝ եկեղեցւո՛յ Ս. Խորհրդոց միայն յատկացեալ Այսօր անձառ, շուրուն ծագումն և վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան, Լայն, Լայն, ծէսերն և արարողութիւնները կ'այլափոխեն և կը ծաղրեն, Ժողովրդեան քով միայն նշոյլը մնացած բարեպաշտութեան զգացումը կ'ուրեն և զնա կը դայթակղեցնեն, իսկ Վեհափառն իրր Կրօնապետ և Դուք իրր Պատրիարք և Ազգ. Վարչութիւն, Ձեր երկուքն պաշտպանեալ կարգ մը երիտասարդ անփորձ և փոսամոլ վարդ.ները եպիսկոպացնելու կը վատնէք Ձեր ժամանակն, և եկեղեցւոյ և նորա ժողովրդեան ենթակայ եղած կրօնական և հոգեկան դայթակղութիւններէն փրկելու միջոցները պրպտելու և հետազօտելու տեղ՝ անտարբեր ականատես վկայ կը հանդիսանաք սոյն դայթակղութեանց։

Եկեղեցական խորհրդոց արարողութիւնները ծաղրել, եկեղեցին ծաղրել չէ՞ . . . Ի՞նչ բանի համար Դուք ԵԿԵՂԵՑԻՈՑ ԳԼՈՒԽ ԵՒ ԴԻՏ ԿԱՑՈՒՑՈՒԱԾ ԷՔ . . . ։

Եթէ երբեք եկեղեցիին սրբութիւնը պաշտպանելու և ժողովրդեան գայթակղութեան տեղի չտալով՝ նորա բարեպաշտութիւնը պահպանելու օրինաւոր միջոցները գտնելու և Ձեր պարտականութիւնները կատարելու անկարող էք, խոստովանեցէք զայս և քաշուեցէք Ձեր աթոռներէն։ Եկեղեցական խորհրդոց ծէսերն լրագրաց ծաղրուծանակէն ազատելու միջոցը չատ դիւրին է գտնել մեզ համար։

Ալ այսուհետև եկեղեցին թո՛ղ դադրի «Լեռ առաւել»ին մէջ մեր Եպիսկոպոսապետին և պատուական հայրապետին, ինչպէս և Երուսաղէմի և կ. Պոլսոյ Պատրիարքներուն համար «աւուրս երկայն ուղիղ վարդապետութեան» մաղթելէ։

* * *

Սրբազան, Ազգ. ժողովոյ մէջ. Օրմանեան Պատրիարքի ատենուան Խառն ժողովոց համարատուութիւնը պատրաստելու համար մասնաւոր ամսականաւոր պաշտօնեայ վարձելու պէտք տեսնուած և սակայն Ազգ. Մնտուկին անձկութեանը պատճառաւ, խնդիրը վարչութեան յանձնուած ըլլալն իմանալով, Ձեզ դիմեցի և իմ 40 տարիէ ի վեր վարած հարցաքննիչ դատաւորի, ընդհանուր դատախազի, դատական քննիչի պաշտօններուս և երբեմն իսկ առաջին կարգի փաստաբանի արտօնագրով պետական ամէն դատարանաց առջեւ ըրած փոխանորդութեանս մէջ ստացած երկար փորձառութեամբս վերոյիշեալ համարատուութիւնը ձրիաբար և ազգասիրաբար կատարելու կարող և պատրաստ գտնուիլս պարզեցի և Ձեզ մատուցի Մկրտիչ Խրիմեան և Ներսէս Վարժապետեան Պատրիարքաց ինձ ուղղած նամակները, որոց պատճէնները անաւասիկ.

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Դ Ի Ւ Ա Ն
Քաղաք. ժողովոյ Ազգ. Վարչութեան
Թիւ 378

Մեծապատիւ Էֆէնտի

Ազգ. Վարչութեան Ուսումնական Խորհրդոյ անդամներէն միոյն հրաժարման պատճառաւ անդամոց պակասած թիւը Քաղաք. ժողովն այս անդամ լրացուց և Ձեր Ազնուութիւնը նոյն Խորհրդոյ անդամ ընտրեց։

Այս ընտրութիւնը որ Քաղաք. ժողովոյ Ձեր վրայ ունեցած համարման մէկ գրաւականն է, չնորհաւորելով Ձեր Ազնուութեան, կը խնդրենք որ բարեհաճիք ազգասիրաբար յանձն առնուլ սոյն ազգային կարեւոր և փափուկ պաշտօնը յոր կոչուած էք, և Ձեր աջակցութիւնը մատուցանել Ուսումնական Խորհրդոյ որ վաղը Դշ. ժամը 3ին իր սովորական նիստը պիտի կազմէ ի Խորհրդարանն Ղալաթիոյ։

Մնամք աղօթս տար
Մ. Կ. ԽՐԻՄԵԱՆ

2 Յունվար 1873

ՀԱՄԱՐ 14

Մեծապատիւ Էֆէնտի

Ազգային Վարչական Կազմակերպութեան Օրինաց 32րդ յօդուածին տրամադրութեան համաձայն, Վարչական Խորհուրդն Ձեր Մեծապատուութիւնն կեդր. Դատարանին Ամուսնական սենեակի անդամ ընտրած է։

Սոյն փափուկ պաշտօնին համար Սահմանադրութեան պահանջած յատկութիւններն ի Ձեզ ամփոփեալ գտնելէ ի զատ, Ձեր հմտութիւնն և փորձառութիւնը հանրածանօթ լինելով, կը փութամ սոյն ընտրութիւնն հաստատել և հրաւիրել զՁեզ ի ձեռնարկութիւն սոյն կարեւոր պաշտօնին։

Վստահ եմք որ Սահմանադրական իրաւամբ Ձենէ խնդրուած աջակցութիւնը չպիտի զլանաք սոյն պարագային մէջ և ազգասիրաբար ընդունելով Ձեր պաշտօնը, պիտի օժանդակէք ազգային գործոց բարւոք մատակարարութեանը, որոյ համար յաջողութիւն և Աստուածային օգնութիւն մաղթելով Ձեզ,

Մնամ աղօթարար
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿ. ՎՐԺ.
ի Պատրիարքարանի Հայոց
Ի Կ. ՊՕԼԻՍ

Սրբազան, Դուք սոյն նամակները կարդալէ ետքը, իբր գիտական և հեռատես մարդ, «Ձեր այս նամակաց մէջ յայտնուած մտաւորական երիտասարդական կորովը հիմակ չէ մնացած, վասնզի տարիքնիդ առած էք։ Տեսէք, ես հիմակ 50 տարեկան եմ և մինչեւ 60 տարեկան կրնամ աշխատիլ։ անկէց վերջը գործէ պիտի քաշուիմ» ըսելով ինձ, պարզապէս Ձեր երիտասարդական մտաւորական կորովն, դատողութիւնը և տրամաբանելու կարողութիւնը չատոնց 'ի վեր կորսնցնելու ճամբուն մէջ ինկած ըլլալնիդ ինձ զգացնել տուիք, բան մը զոր Ձեր վերոյիշեալ գլուխ գործոց անտրամաբանական, հակասական և անհեթեթ բանախօսութեան բոլոր պարբերութիւնները անառարկելի կերպով կը հաստատեն։ բանախօսութիւն մը որ՝ գիտականօրէն՝ մանկուքեան մէջ ինկածի խեղապատակին միայն յատուկ է։

Վերոյիշեալ համարատուութեանց պատրաստութիւնը Պատրիարք սրանի պաշտօնէութեան յանձնուելը երկու ամիս առաջ Ազգ. ժողովոյ մէջ առաջարկուած պատուն, պաշտօնէութեան զբաղեալ վիճակը առարկելով արգելք հանդիսացած ըլլալնիդ և իմ՝ նոյն համարատուութիւնները ձրիապէս պատրաստելու առաջարկութիւնս ի՞նչ շուտով մոռնալով, այս անգամ երկու քարտուղարի 20 ական ոսկի վարձք տուիք։ Արդեօք դրամական հատուցումն է՞ որ նոյն գործը տեսնելու տրամադրելի ժամանակ կը հայթայթէ նոյն պաշտօնէից։ ի՞նչ հակասական և անըմբռնելի ընթացք է այս։ Ասկէ զատ, իմ՝ առաջարկած ձրի և անձնուէր աշխատութիւնս աւելի նախամեծար էր թէ՝ այսպէս ազգային Անտուկին ի վնաս կատարուելիք ամսականաւոր պաշտօնէից մասնաւոր վարձքով աշխատութիւնը։ Սրբազան, Դուք հանրային

շահը մասնաւորին շահէն զանազանելու և պաշտպանելու կարողութիւնն ալ չունիք եղեր։։։

* * *

Սրբազան, Պատրիարքարանի մէջ, Խորէն Աշքեան Պատրիարքէն իբր բարենորոգման սկզբնական յիշատակ մնացած, սակայն տարաբաղդաբար, Պատրիարքարանը՝ ցարդ ան-օրինութիւնը և իր քմահաճոյքն ամէն օրինաց գերադասելու ունակութիւնը իրեն չահերուն աւելի նպաստաւոր զտնելուն պատճառաւ՝ գրեթէ կրօնական և քաղաքական ժողովներուն ատեանը չը հանելով՝ լքեալ վիճակի ենթարկած՝ Դատաւորութեան կարեւոր համառօտ Հրահանգը երկար աշխատութեամբ ընդլայնելով պատրաստած ընդարձակ Դատաւորութեան Օրինագիծ, ինչպէս նաեւ Պատրիարքարանի և պաշտօնէից և ժողովոց միջև փոխանակուած պաշտօնաթղթերուն՝ գիտակցութեամբ անհետացման, կորստեան և չարաչար կիրարկման և զեղծման տեղի չտալու համար բոլոր խնդրագրոց և պաշտօնաթղթերուն ստացագրով փոխանակուելու անհրաժեշտ պէտքը չեշտող Օրինագիծս, նոյնպէս ուրիշ խիստ կարեւոր մէկ Օրինագիծս, ասկէց երկու տարի առաջ Խառն Ժողովոյ մատուցած, և ի վերջոյ սոցա ուսումնասիրութեան և վաւերացման համար իբր Ատենապետ Դատաստանական Խորհրդոյ՝ գրած գրութիւններս և բազմիցս բերանացի ըրած պահանջումներս ցարդ ուշադրութեան չեն առնուած, մինչ Ձեր նախապահած ժողովներն և Դուք ցարդ առանց օրինադրքի պարծ տեսնելով՝ անհերեւակայելի և անլուր ապօրինութեանց մէջ ինկած էք, որուն իբրև ապացոյց,

առ այժմ միայն Կրօնական Ժողովոյ արձակած մէկ քանի անհեթեթ և դայթակղելի վճիռներն այստեղ յառաջ կը բերեմ։

* * *

Ասկէց ինը տարի առաջ Պագալեան Գէորգ քէյն. կինը ողջ դտնուած Բաղէշցի Կրպտ. Պետրոսեանը պսակած ըլլալուն համար, Կրօն. Ժողովոյ կողմանէ 'ի բացակայութեան երեք ամիս փիլոնազրկութեան դատապարտուած, և պսակն ալ լուծուած էր։ Յիշեալ քահանային դիտողագրոյն վրայ, Ժողովը խնդիրը ի ներկայութեան քննելով, նախորդ վճիռը ջնջած և անպարտութեանը վճիռ տուած էր։ Ժամանակ մը ետքը Կրօնական Ժողովը երրորդ անգամ խնդիրը քննելով, Բաղէշցիին կնոջ ողջ կամ մեռած ըլլալը՝ ճամբաներուն հաղորդակցութիւնը ձմեռան առթիւ դադրելուն հետեւանօք՝ ստուգել անկարելի եղած ըլլալը տեղւոյն Առաջնորդէն ծանուցուած ըլլալուն հակառակ, յիշեալ քէյն.՝ պատասխանատուութիւնը վրան առնելով պսակած ըլլալուն համար՝ 15 աւուր փիլոնազրկութեան դատապարտած է։

Այս երեք անգամ տեղի ունեցած դատավարութեանց ո՛ր աստիճան արտառոց, անիրաւ և ապօրինի ըլլալը ի տարեւ մի առ մի պարզել հարկ անհրաժեշտ համարեցի։

1. Սրբազա՛ն, քանի որ մէջտեղը պսակ և ամուսնութեան խնդիր կար, պարտաւոր էիք սոյն դատին քննութիւնը Դատաստանական Խորհրդոյ յանձնել և ո՛չ թէ Կրօնական Ժողովոյ, որ ըստ Սահմանադրութեան 28րդ. յօդուածի, սոյն դատը տեսնելու երբէք իրաւասու չէ։

2. Կրօնական Ժողովը Պագալեան քահանային անպարտութեանը համար կանխապէս տուած վճիռը ինքնաբերաբար ջնջելու և նորէն 15 աւուր փիլոնազրկութեան դատապարտելու օրինապէս երբէք իրաւասութիւն չունէր։ Ինչպէս որ սովոր է լսել իր նախապէս տուած որոշումները (*), այս անգամ ալ յիշեալ քահանային անպարտութեանը նկատմամբ տուած որոշումը լսած և 15 աւուր փիլոնազրկութեան դատապարտած և Օրէնքը խաղալիկ ըրած է։

3. Պագալեան քահանային վերագրեալ արարքը երրորդ դատավարութեան միջոցին ալ միևնոյն արարքն էր, և էջմեզը մեղմացուցիչ պարագայ մ'ալ չի կար. ի՞նչպէս և ո՞ր օրինօք՝ առաջին անգամ Ձեր տուած երեք ամիս փիլոնազրկութեան պատիժը 15 օրուան կը զեղչէք։

4. Սրբազան, քանի որ Բաղէշցիին կնոջ՝ ողջ կամ մեռած ըլլալն առ այժմ ստուգել անկարելի գտնուիլը Առաջնորդական պատասխանատուէն հասկցուած է, Պագալեան քէյն. պատասխանատուութիւնը իր վրան իսկ առած ըլլայ, այս պարագան զինքը երբէք օրինօք պատասխանատու ձգելու հանգամանքը չունի։ Այս ապօրինի պսակին միակ պատճառ և պատասխանա-

(*).—Օրինակ՝ «բաց ու գոց»ի խնդիրը, որուն մէջ եկեղեցիները ատենախօսութեանց առջև անխտրաբար բաց ձգելու մասին նախապէս տուած որոշումը լսելով և մինչև իսկ կաթողիկոսական կոնդակին գործադրութիւնը հրամայող Ազգային Ընդհանուր Ժողովոյ անդառնալի վճիռը առաթուր ընելով ի վերջոյ վճռեց խապտ գոցել եկեղեցիները։

տուն՝ Հրամանին կնքող նախորդ Պատրիարքական Փոխանորդն է (Գաբրիէլ Նորատունկեանի մօրեղբայր Գարբ. Եպիսկ. Ճէվահիրճեան), հետեւաբար պատասխանատուութիւնը՝ «վրան ասած է» ըսելով՝ զայն Պաշտպանեան քահանային վրայ բեռցնել և դանիկայ 15 աւուր փիլոնազրկութեան դատապարտել և ոճրին հեղինակը այսպէս ազատ և անպարտ կացուցանելով՝ անհանդուրժելի ղեղծում և անիրաւութիւն գործած էք։

Սրբազան, Սուրբ Աւետարանը առանց բանի պոռնկութեան իր կինը ձգողը շնացեալ կը հռչակէ։ Ըսէք մեզի, կ'աղաչեմ, այս գործին մէջ շնացողը՝ իր կնոջ մեռած ըլլալը ստուգելով իրեն ամուսնութեան հրամանի տրուիլը խնդրող Բաղէշցի՞ն է, թէ՝ սոյն հրամանին անպատկառօրէն տուող և ոճիրը գործող Պատրիարք-Փոխանորդն է...։

Սրբազան, հոս ոճիր մը գործուած է պակին դէմ, որով կոյս մը իբր օրինաւոր ամուսին իրեն տրուած անձին իր կոյսութիւնը և ամենայն ինչ... յանձնելով, ինը տարի նորա ֆիյֆին անձնատուր կ'ըլլայ, և միւս կողմէն ալ նոյն անձին օրինաւոր կինը ողջ ողջ իր ամուսնոյն հանդէպ ունեցած իրաւունքներէն կը զրկուի, և յետոյ «սխալ եղեր է» ըսելով՝ վերջին պակը կ'աւրուի։

Սոյն ոճիրին գործուելուն առթիւ, ոճրին հեղինակը հանդիսացող Պատր. Փոխանորդը՝ յանուն Ս. Պակի տեղի ունեցած կուսապղծութեան և սրբապղծութեան համար ծանր պատժոյ ենթարկելու և նոյն անիրաւեալ կնոջ բարոյական և նիւթական վնասուց հատուցման դատապարտելու պարտաւոր դանուելնուդ հակառակ՝ յիշեալ վնասներն անտեսելով, միայն պակող քահանային 15 աւուր փիլոնազրկութիւնդ կը դատապարտէք, այն քահանան որ ոճիրին հեղինակը չէ(*), իսկ ոճրին ենթական կը լքէք։

Սրբազան, Դուք այս կուսապղծութեան և սրբապղծութեան միակ պատիժ միմիայն 15 աւուր փիլոնազրկութիւն որոշելովն՝ այլևս Ս. Պակը և կոյսութիւնը խաղալիկ դարձուցած էք, և որովհետև յանուն Ս. Պակի գործուած կուսապղծութեան հրաման տուողը որ և է պատժոյ չէք ենթարկեր, և միայն պակող քահանան 15 աւուր փիլոնազրկութիւնով կը պատժէք, ասով յանուն Ս. Պակի բաղում դայթակղութեանց տեղի տուած չէ՞ք ըլլար...։

Սրբազան, երբ Դուք իբր ընդհանուր հսկող կրօնական գործոց՝ Ձեր նախագահած Կրօնական Ժողովոյ հետ Ս. Պակի խորհուրդը այս աստիճան կ'անարգէք, ժողովուրդն ի՞նչպիսի վերաբերում կրնայ ունենալ յայսմ մասին...։

* * *

Մ. Ճէրահեանի, իր կնոջ Գոհարի՝ անբարոյութիւն վերագրելով բացած ամուսնալուծման դատին

(*).—Կրօն. Ժողովոյ որոշումը ծանուցանող և քահանային ուղղեալ Պատր. Փոխանորդին նամակին մէջ ըսուած է թէ յիշեալ քահանան նոյն պակը «ձրիաբար և առանց չարաշահութեան կատարած ըլլալուն համոզում գոյացուցած է»։ Ահաւասիկ պարագայ մը որ ա՛լ աւելի կը չեշտէ քահանային նկատմամբ Կրօն. Ժողովին արձակած վճռոյն անարդարութիւնը։

դատավարութեանը մէջտեղին, յիշեալ կնոջ կենցաղի մասին տեղական քննութիւն կատարել հարկ տեսնուելով, այս առթիւ գրուած պաշտօնագրոյն 'ի պատասխան՝ յիշեալ Գոհարի անբարոյ վարուց տէր ըլլալը հաստատող Բերայի Թաղական Խորհրդէն եկած 31 հատ. 1906 թուականի նամակը Դատաստանական Խորհրդոյ քարտուղար Պ. Նշան Փափազեան 2 ամիս և առանց պատճառի պահելով, ի վերջոյ միւսնոյն Թաղական Խորհրդէն ինքնաբերաբար երկրորդ անգամ եկած և Գոհարի ամբարոյութիւնը ծանուցանող 25 յունվար 1907 թուականի նամակը միայն Դատաստանական Խորհրդոյ նկատառման յանձնելուն հետեւանքը, սոյն վերջինը Գոհարի անբարոյութիւնը ապացուցեալ համարելով՝ 'ի բացակայութեան ամուսնալուծման որոշում տուած և երկու կողմին հաղորդած է։

Գոհարի տուած դիտողագրոյն վրայ՝ 'ի ներկայութեան տեղի ունեցած դատավարութեամբ, նորա անբասիր կենաց տէր ըլլալը չեշտող վերոյիշեալ 31 հատ. թուականի նամակին գոյութիւնը հասկցուելով, նոյն վճիռը կը ջնջուի և Գոհարի անպարտութեան որոշում տրուելով, դատը իր նախորդ վիճակին կը վերածուի։

Կրօնական Ժողովն՝ ըստ 28րդ յօդուածի Սահմանագրութեան՝ սոյն դատը ինքնին վերաքննելու իրաւասութիւն չունէր, և քանի որ երկու ամուսնոց միջև կենակցութիւնը անկարելի դարձած ըլլալուն վրայ հիմնուելով 'ի նորոյ ամուսնալուծման դատ չէ բացուած, Կրօնական Ժողովը՝ այս ամուսնոց միջև կենակցութեան անկարելիութիւնը ինքնին յառաջ բերելով՝ ամուսնալուծման որոշում տալը անհեթեթ է։

* * *

Մաքրուհի (ծնեալ Կ. Սկերիչեան) իր ամուսնոյն՝ Ոսկերիչ Գասպար Փափազեանի՝ դէմ բացած ամուսնալուծման դատը նախորդ Դատաստանական Խորհուրդը տեսնելով և լսուած վկայութիւնները բաւարար չը համարելով՝ Գասպարի անպարտութեան վճիռ արձակած էր։

Կրօնական Ժողովն այս դատն ալ առանց իրաւասութեան ստանձնելով, արդի Դատաստանական Խորհրդոյ կը հարցնէ թէ «վերոյիշեալ վճռագրոյն մէջ յիշուած վկայութիւններով սոյն դատը ապացուցեալ կը համարուի՞ թէ ոչ, և Խորհուրդէն հաստատական պատասխան առնելով՝ նախորդ Դատաս. Խորհրդոյ վճռագիրը հակառակ օրինաց կը ջնջէ և ամուսնալուծման և ինչպէս նաև Գասպարի եկեղեցական հաղորդակցութենէ զրկման որոշում կուտայ. որոշում՝ը որ հետեւեալ պատճառներով ապօրինի է։

1. Արդի Դատաս. Խորհուրդը իր նախորդին վճռագրոյն մէջ ցուցուած ապացոյցներուն անբաւականութեանը մասին տուած որոշումը դնահատելու և ջնջելու օրինօք երբէք իրաւասութիւն չունի։ 2. Դատարան մը իր վճռելիք դատին ապացոյցները անձամբ լսելու և դնահատելու պարտաւոր է։

Ուստի, Սրբազան, Կրօնական Ժողովոյ՝ այսպէս արդի Դատաստանական Խորհրդոյ կարծիքին վրայ հիմնուելով և նախորդ Դատաս. Խորհրդոյ որոշումը ջնջելով՝ ամուսնալուծման և Գասպարի իսկ եկեղեցական հաղորդակցութենէ զրկման համար տուած որոշումը անհեթեթ է և գայթակղեցուցիչ։

Սրբազան, Ձեր նախագահած Կրօնական Ժողովոյ տուած այսպիսի անիրաւ, անօրէն և անհեթեթ անհա-

մար որոչումներուն գոյութեանը անհերքելի վկայներ են Իր (Կրօն. Ժող.) ատենագրութիւնները։

Սրբազան, Դատաստանական Խորհրդոյ դէմ իբր Ատենապետ բացած և ըստ օրակարգի և օրինաց՝ հարիւրապատիկ առաջնութիւն և նախապատուութիւն ստացած դասս տարիէն աւելի է ամէն ազդեցութիւն բանեցնելով ձգձգեցիք. Խորհրդոյ Նախագահ և Ձեր ազգական Ղևոնդ Ծ. վրդ. և անդամ և Ձեր եղբայր Ազրիպաս էֆ. Դուրեանները պաշտպանելու տենչով, և օրէնքն ու օրակարգը քուրջի կոտոր և Ձեր քմահաճոյից խաղալիք դարձուցիք և ասով արդարացուցիք այն անբասիր կեանքը որուն վրայ միայն յենլով Ձեր հոգեւոր ծնողը Ձեզ նման օրինաց պահանջած բոլոր յատկութիւններէն զուրկ, անփորձ և անկարող վանական մը Պատրիարքական Գահը բարձրացնելու ոգի ի բաւին աշխատելով, զՁեզ Իրեն յաջորդ ընտրել տալէն վերջը միայն՝ ոտքը Պատրիարքանէն դուրս հանեց. և Դուք Ձեր հոգեւոր ծնողին ծառայութիւնը վարձատրեցիք ոչ միայն Ձեր անձնական խակը համարած Ազգային Մնատուկէն հակառակ օրինաց վճարելով՝ անոր կաթողիկոսական պաշտօնը վաւերացուած օրէն մինչև կ. Պոլսէն մեկնած օրը իր նախորդ պաշտօնին յատուկ ամսականները, այլ և նորա՝ Ազգային Սահմանադրութիւնը խորտակող հրամանները՝ հակառակ Ձեր երդման՝ զործադրելով, և միանգամայն Երուսաղիմայ Յարութիւն Պատրիարքին հանդէպ՝ հակառակ Քրիստոնէական սկզբանց՝ Նորա տածած ատելութեան և ոխակալութեան կոյր գործիք ըլլալով(*)։

(*).—Իզմիրլեան կաթողիկոս՝ իբր աքսորական Երուսաղէմի վանքին մէջ 12 տարի ձրիաբար և շոռտաքար հիւրասիրուած միջոցին, եթէ իր պաշտօնակից Յարութիւն Պատրիարքի կողմէն իրեն հանդէպ որ և է մեղանչում իսկ գործուած ըլլայ, 77 անգամէն աւելի ներելու պարտաւորութիւնը չնչտող Մեծ Վարդապետին անդառնալի հրամանը իր կրքին համար ոտնակոխ ընելը, Իւր Մէր և Միաբանութիւն քարոզող անդրանիկ Կոնդակին մէջ յիշեալ Պատրիարքին անունն իսկ չը յիշել և ողջոյնը գլանալը, Էջմիածնայ Օրացոյցին մէջ ալ Նորա (Յար. Պատրիարքին) անունը չյիշատակելէ զատ՝ Օրացոյց մը իսկ ըստ սովորութեան նուէր չղրկելը, և զանի պաշտօնէ դադրեցնելով, անոր տեղ Ն. Ամենապատուութեան ոսոխ միաբանները՝ Տեղապահութեան և այլ պաշտօններու կոչել տալը՝ իր անհաշտ ատելութեան և ոխակալութեան ապացոյցներ չե՞ն։

Սրբազան, Ձեր պաշտօնավարութենէն ի վեր տեղի ունեցած հակառամանադրական անթիւ արարքներն, և ինչպէս Ձեր բերնովն իսկ խոստովանեցաք, թէ՛ հանրութեան և թէ՛ տեղական և օտար մարդոյ կողմէ իսկ Ձերդ անկարողութեան և ապիկարութեան մասին արտայայտուած կարծիքն և քննադատութիւնները, ո՛ր «Ձայն բազմաց ձայն Աստուծոյ» են, ինչպէս և Ձեր գլուխ գործոց վերոյիշեալ հակասական, անտրամաբանական, անհեթեթ բանախօսութեան ամեն մի պարբերութիւնն անհերքելի ապացոյցներ են թէ՝ դժբաղդաբար կախարդական և խարեբայական հրապոյրներէ թելադրուելով Ձեզ յանձնուած Ազգ. նաւը՝ Ձեր ղեկավարելու անկարողութեամբը՝ ընկղմելու, ինչպէս և գործադրութեանը հակելու Ձեր ուխտած Սահմանադրութիւնն ալ բոլորովին քանդելու աստիճանին հասուցած էք։

Սրբազան, Ձեր բանախօսութեան մէջ «երկու սուրի մէջ կը գտնուիմ» ըսած էիք. այդ կէտին օրինական լուծումն ի վերև Ձեզ մատնանշած եմ։

Սակայն դուք այժմ երկու թուրի մէջ կը գտնուիք. մէկ կողմէն Դուք Ձեզ յանձնուած պաշտօնը կատարելու անկարողութեան այլևս համոզուելով խիղճերնիդ ձեզ կը խայթէ, որով և հրաժարելու միտում ցոյց կուտաք, միւս կողմէն Ձեր արծաթամոլութիւնը և փառամոլութիւնը Ձեր խղճի խայթը կը լռեցնէ, Պատրիարքական թոշակը կարելի եղածին չափ երկայն տևեն ուտելու և իմիջերնիդ աղէկ մը կապելու համար, և ասոր համար պէտք կ'զգաք ուխտերնիդ դրժելով և «ամէնուդ ուզածը թող ըլլայ» ըսելով ամենուն հետ անուշ երթալ և օրհնութիւն ի ձեռին՝ յուզեալ, շաշագին և ազգասէր ընթացք մը բռնել. . . , և այս երկու թուրերուն միջև երևալ և տատանեալ կը չարունակէք. . . ։

Սրբազան, եթէ՝ իբր եկեղեցոյ խակ ուխտեալ պաշտօնեայ՝ արծաթամոլութիւնը և փառամոլութիւնը Քրիստոնէական սկզբանց հակառակ ըլլալը կ'զգաք, և եթէ «ակն քո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ ի քէն» աւետարանական պատգամը կը յարգէք և խիղճ և արդարութիւն կը ճանչնաք, պէտք է անյապաղ հրաժարիք Ձեր պաշտօնէն՝ որ Օրմանեան Պատրիարքին ճիրաններէն ազատուած Սահմանադրութիւնը քանդելու միայն ծառայած է։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՆԹԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԻԱՐԱՔԱՆԻ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՒ ԲԱԲԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ազգ. Պատրիարքարանի և ճիւղերուն մէջ գործուած վերգծումներու, օրինազանցութեանց և Ազգ. գործոց անել վիճակին միանգամ ընդ միշտ լրջապէս վերջ տալու համար, կ'առաջարկեմ հետևեալ միջոցները, որոնց վերայ Ազգ. Երեսփոխանաց բարձր ուշադրութիւնը հրաւիրել ինձ նուիրական պարտք կը համարիմ։

Պատրիարքարանի և Առաջնորդարանաց մէջ տեղի ունեցած վերգծմանց և օրինազանցութեանց և Ազգ. գործոց խճողեալ քաոսային անորոշ վիճակին վերջ տալու, Ազգ., ամուսնական, վարչական և տնտեսական կեանքը օրինապէս ապահովելու, Ազգ. Սահմանադրութիւնը լրջապէս և գործնականապէս գործադրելու և ցարդ անօրէն մնացած Պատրիարքարանը և իր բոլոր ժողովներն և Խորհուրդներն օրէնսդրութեամբ օժտելու հիմնական միջոցները ուսումնասիրելով՝ առ ի գործադրութիւն տեղեկագրելու համար, Ազգ. և Քաղաք. ժողովոց և Խորհրդոց անդամներէն և թէ դրսէն, Ազգային գործոց և պետութեան օրինաց հմուտ և փորձառու անձերէ բաղկացեալ ժողով մը կազմելու է, որուն պաշտօնը պիտի ըլլայ.

1. Սահմանադրութեան 47րդ յօդուածին պա-

հանջման համեմատ, ամուսնացեալ, իրաւագէտ և 40 տարին լրացուցած եկեղեցական և աշխարհական 8 անդամէ բաղկացեալ Դատաս. Խորհուրդներ կազմակերպել ի գաւառս, ուր ամուսնական դատերը՝ անիրաւասու և օրինաց անգիտակ կրօնականներու ձեռքը խաղալիկ դարձած են ցարդ, այն պատճառաւ որ, Սահմանադրութեան հուչակումէն ի վեր դժբաղդաբար Պատրիարք. գանը բարձրացող բոլոր Պատրիարքներ, նոյն Սահմանադրութեան անթերի գործադրութեանը հակելու ըրած ուխտերնուն հակառակ, չեն կազմակերպած նոյն Խորհուրդները։

2. Սահմանադրութեան 35, 48, 50 և 56րդ յօդուածոց՝ կրօնական ժողովոց, Վանորէից, կտակաց և Թաղ. Խորհրդոց համար պատրաստութիւնը պահանջած, բայց տարաբաղդաբար 50 տարիէ ի վեր ի նկատի չառնուած կանոնագրութիւնները անմիջապէս պատրաստել և հրատարակել։

3. Եւ որովհետև փորձով հաստատուած է թէ մեր Պատրիարքարանին մէջ լաբիւրինթոսային անել վիճակ ստացած ազգ. գործերուն համախոնումը և լճացեալ զեղծումներն և օրինազանցութիւնները յառաջ եկած են մեր վարչական, դատական ժողովներու անգամոց՝ ըստ պահանջման Սահմանադրութեան՝ իրաւագէտ, փորձառու և կարող չըլլալէն, իրենց ձեռքը իբր ուղեցոյց և առաջնորդ ծառայող օրէնքներ չգտնուելէն և վերջապէս օրինաց անթերի գործադրութեանը հակելու համար թուքակօրէն կատարուած լոկ տեսական երդմանց հակառակ՝ գործադրութեանը լրջապէս հետապնդող չգտնուելէն, ուստի օրինաց գործադրութեան պաշտօնապէս հրաւիրելու և զեղծումներն և հեղիակներն հետապնդելու և

պատժելու համար, թէ՛ Պատրիարքարանի և թէ՛ Առաջնորդարանաց մէջ, ազգ. գործոց հմուտ և փորձառու իրաւագէտ եկեղեցականներէ և աշխարհականներէ բաղկացեալ կեդր. Նախնական և Վերաքննիչ դատարաններ և միայն Կ. Պոլսոյ մէջ վճռաբեկ դատարան մը կազմելու է, Տէրութեան դատարանաց կազմակերպութեան օրինաց համաձայն։ Նաև Նախնական դատարանին մօտ Հարցաքննիչ դատաւոր մը և Ընդհանուր Դատախազի Օգնական մը, իսկ Վերաքննիչ և Վճռաբեկ ատեաններու քով ալ մէյ մէկ Ընդհանուր Դատախազ կարգելու է։

4. Աւելորդ է հոս դիտել տալ որ Ազգային Ժողովն օրէնսդրական է և դատարանի երբէք հանդամանք և իրաւասութիւն չունի, թէև դժբաղդ թիւրիմացութիւններով մեր Օրէնսդրական Ժողովը՝ հակառակ օրինաց՝ դատարանի դեր ստանձնած և վճիռներ արձակած է, որոնք ըստ օրինի չեղեալ և անգործադրելի են, զոր օրինակ Ղևոնդ Ծ. վրդ. Մաքսուտեանի դէմ տրուած 11000 ոսկինոց վճիռն, և.ն, և.ն։

5. Վերոյիշեալ դատարաններն պարտաւոր պէտք է ըլլան պետական դատարանաց մէջ կիրարկեալ բոլոր օրինաց համաձայն շարժիլ և գործել։

6. Սահմանադրութեան 28րդ յօդուածը կրօնական Ժողովոց զուտ կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը միայն պաշտօն տուած ըլլալուն համար, սոյն Ժողովը առանձնաբար ամուսնական դատերը քննելու հիմնապէս և օրինապէս իրաւասու չգտնուելով հանդերձ, ըստ քմահաճոյից Նախնական և Վերաքննիչ Դատարանաց հանդամանք առնելով՝ արդարութեան, խղճի և օրինաց հակառակ որոշումներ շատ անդամներ արձակած է։

Պէտք է ազդարարել որ զէթ այսուհետև զգուշանայ այսպիսի հակասահմանադրական ընթացքէ։

7. Ազգ. Դատարանաց համար ժամանակին չարաչար աշխատութեամբ և անձնուիրութեամբ ի գիր առած Դատավարութեան ընդարձակ Օրինագիծս, ինչպէս և Պատրիարքարանի և ժողովոց և պաշտօնէից միջև փոխանակուած պաշտօնագրոց անհետացման, կորստեան և այլ զեղծմանց տեղի չտալու համար, վերոյիշեալ թղթերուն ստացագրով միայն փոխանակուելու անհրաժեշտ պէտքը չնչող և դատական ծախքերն որոշող իմ յօրինած այլ երկու Օրինագիծերս՝ ասկէ երկու տարի առաջ իբր Դատաս. Խորհրդոյ Ատենապետ՝ պաշտօնագրով մը Դուրեան Պատրիարքին մատուցի, սակայն Նորին Սրբազնութիւնը՝ ան-օրինութիւնը և իր քմահաճոյքը ամէն օրինաց նախամեծար համարելով, չի հաճիր պատկանեալ մարմիններու նկատառութեան յանձնել զայնս և կը չարունակէ Զաքարիական լռութիւն պահել, թէ՛ գրաւորապէս և թէ՛ բերանացի բազմիցս իրեն ըրած դիտումներուս հակառակ։ Պէտք է սոյն Օրինագծերս անմիջապէս երեւան հանել և քննելով ու վաւերացնելով, դնել ի գործադրութիւն։

8. Եւ մինչև որ յիշեալ Դատավարութեան Օրինագիծն ըստ օրինի հոչակուի, պէտք է Խորէն Աշըքեան Պատրիարքէն միակ յիշատակ մնացած Դատավարութեան համառօտ Հրահանգն թէ՛ Նորակազմ Գաւառ. Դատաս. Խորհրդոց, թէ՛ Կ. Պոլսոյ Կեդրոնական Դատաս. Խորհրդոյ և թէ՛ Քաղաք. և Կրօնական ժողովոց հաղորդել ի գործադրութիւն։

9. Օրմանեան Պատրիարքին պաշտօնավարութենէն մինչև այսօր Կ. Պոլսոյ Կեդրոնական Կրօն. և Քաղաք.

ժողովոց և Տեսուչ Խորհրդոց և Խնամակալութեանց որոշումներն և Պատրիարքարանի բոլոր պաշտօնէից գործառնութիւնները քննելով, զեղծումներն հաստատուած ժողովականներն և պաշտօնեայները՝ եթէ ի պաշտօնի են՝ պաշտօնանկ ընել և միանգամայն Սահմանադրութեան 66-67րդ յօդուածոց համեմատ ընտրողական և ընտրելիութեան իրաւունքներէն զրկել հարկ է։

10. Քանի որ Ազգ. Սահմանադրութեան 36, 47 և 69րդ. յօդուածները պայման դրած են որ Ազգ. Քաղ. և Օրէնսդրական ժողովոց և Դատաս. Խորհրդոց եկեղեցական և աշխարհական անդամներն՝ Ազգային գործոց և աէրութեան օրինաց հմուտ ըլլան, պէտք է պետական օրինաց ուսումը օրինապէս պարտաւորիչ ընել Ազգ. վարժարանաց մէջ. միւս կողմէ ալ Թաղ. Խորհրդոց պէտք է հրահանգ տալ, որպէս զի երեսփոխանական ընտրութեանց ատեն, ինչպէս Սահմանադրութիւնը կը պահանջէ, պատրաստուելիք ընտրելեաց ցանկին մէջ նախապատուութիւն տան պետութեան օրինաց հմուտ, փորձառու և կարող անձերու։

11. Սահմանադրութեան 47րդ յօդուածը բացարձակապէս կը պահանջէ որ «Դատաս. Խորհրդոյ անդամներն 40 տարին լրացուցած, ամուսնացեալ և իրաւագէտ ըլլան»։

Օրէնսդիրը սոյն պայմանը դրած է, կանխատեսելով որ, 40 տարեկանէն վար երիտասարդ և ամուրի անձեր՝ ամուսնական կեանքին դաղտնիքներուն քննութեանց առթիւ՝ ի բնէ ենթակայ կրնան ըլլալ փորձութեանց և գայթակղութեանց։ Մեր Սահմանադրութեան բարեյիշատակ օրէնսդիրներն և հեղինակներն, Աղաթոնեան Գրիգոր և Մկրտիչ, Ալանեան Ստեփան, Ռու-

սինեան և Օտեան Գրիգոր էֆէնտիներն՝ նոյն յօդուածին պահանջման համեմատ՝ կեղծն. Դատաս. Խորհրդոյ երկար ատեն՝ Մկրեան Ցոլհաննէս և այլ քահանաներն իբր Պատրիարք. Փոխանորդ նախագահել տուած են։

Այս մասին Պատրիարքարանի արձանագրութիւններն անհերքելի վկայ են։

Վերոյիշեալ 47րդ յօդուածին երկրորդ պարբերութիւնը, որ է «Դատաս. Խորհրդոյ նախագահը Պատրիարքական Փոխանորդն է», երբէք իրաւունք չի տար օրինաց վերոյիշեալ պայմաններէն դուրս ըստ քմաց ընտրուած 28 տարեկան ամուրի Պատրիարքական Փոխանորդին նոյն Խորհուրդին նախագահելու։

Ազգային բոլոր Դատաս. Խորհրդոց նախագահներուն՝ ամուրի և երիտասարդ կղերականներէ ընտրուիլը՝ մեր Պատրիարքարանին օրինազանցութենէն և անհոգութենէն յառաջ եկած է։ Սոյն զեղծումն Օրինաց գործադրութեան բնաւ արգելք չկրնար հանդիսանալ։ Եւ արդարև ո՞րն է օրինաւորը. Դատաս. Խորհրդոյ Նախագա՞հը պէտք է վերոյիշեալ 47րդ յօդուածին հպատակի, թէ նոյն յօդուածը պէտք է հպատակի ըստ քմահաճոյքի ընտրուած ամուրի և օրինաց անգիտակ երիտասարդ եկեղեցական փոխանորդի մը։

12. Պէտք է կարգել նաև 40 տարին լրացուցած, ամուսնացեալ, փորձառու, օրէնսգէտ և կարող Պատրիարքական մը, աւելցնելով իր վրայ նաև Գործակատարի պաշտօնը։

13. Թէև Պատրիարքին պաշտօնը կը կայանայ մեծաւ մասամբ Ազգ. ժողովոց և Խորհրդոց որոշմանց գործադրութեան մէջ, սակայն դաւանափոխութեան, ծնընդեան, մկրտութեան, ամուսնութեան հրամանի, մահ-

ուան, ժառանգութեան, զինուորագրութեան, ինչպէս նաև Դատաս. Խորհրդոյ կողմէ տրուած վճռագրոց թարգմանութեանը և իճրա տայիրեսին դրկուած վճռագրերուն գործադրութիւնը յապաղեցնելու համար տրուելիք «թէէիիր իճրա»ի և այլ իշխանապահներու ցարդ միմիայն Պատրիարքին կամ Փոխանորդին և պաշտօնէից քմահաճոյքին ձգուելով՝ տեղի տրուած անհամար զեղծմանց և անորոշ պատասխանատուութեանց վերջ տալու համար, այսուհետև սոյն խնդրոց վերաբերեալ բոլոր վկայագրերն նախ մինչև որ պատկանելի ժողովոց կողմէ որոշման տակ չառնուին և նոյն որոշման համաձայն յիշեալ մարմնոց պաշտօնական կնիքովը կնքեալ և Ատենապետին և դիւանադպրին ստորագրութեամբ վաւերացեալ չըլլան, Պատրիարքը և իր Փոխանորդն նոյն վկայագիրները կամ վճռագրերը պէտք չէ վաւերացնեն։

14. Եւ որովհետև Ազգը ընտրած է Երեսփ. Ժողովը, և փոխանորդ մը՝ իր պարտականութիւնը կատարած միջոցին՝ օրինօք չէ կարող իր փոխանորդեային ներկայութիւնը արգիլել և անկէ գաղտնի գործ տեսնել, ժողովն ալ երբէք իրաւունք չունի ունկնդրութեան իրաւունքէն զրկելու իր փոխանորդեալը, որ է Ժողովուրդը։ Այլ է նախազգուշական միջոցներ ձեռք առնել, ինչպէս օրէնքը կը հրամայէ, արգիլելու համար ունկնդիրներու կողմէ տեղի ունենալիք անկարգութիւնները։

Տեա՛ք Երեսփոխանք,

Ինչպէս կը տեսնէք վերոգրեալ մանրամասնութիւններէն, Դուրեան Պատրիարք իր անկարողութեան պատճառաւ իր ուխտը դրժած և արդի Խաուն ժողովոյ հետ, Սահմանադրութիւնը, կարգապահութիւնը և ա-

մէն օրինական չէնք քանդած, եկեղեցւոյ խորհուրդ-
ներու արարողութիւնները ծաղր ու ծանակ ընելու և
ժողովրդեան ջերմեռանդութիւնն ալ խանգարելու տե-
ղի տուած և Ազգը կորստեան անդունդը դահավիժելու
աստիճանին հասցուցած են։

Եթէ օրինաց և Ազգին հանդէպ Ձեր ստանձնած
բարձր պաշտօնը լրջապէս և ի խորոց սրտի ճշմարտա-
պէս կատարելու և Ազգ. Սահմանադրութիւնը տառա-
պէս գործադրելու և կէս դարէ ի վեր Օրէնքէ զուրկ
մնալով նեխած և ապականուած Պատրիարքարանը ի-
րականապէս մաքրագործելու և բարեկարգելու և Ազ-
գին կենսական չահերը ապահովելու լուրջ կամք և փա-
փաք ունիք, պէտք է անմիջապէս դադրեցնէք Ազգ.
վարչութիւնը և Պատրիարքը և գործադրէք վերոյիշեալ
առաջարկներս։

Եւ եթէ երբէք անտարբեր գտնուիք դժբաղդ Ազ-
գին թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական տեսակէտով
ենթակայ եղած տգնապալի և վտանգաւոր կացու-
թեանը հանդէպ և խուսափիք Ձեր ընտրութեանը ատեն
զՁեզ ընտրող փոխանորդեալին՝ չոայլաբար Ձեր խոս-
տացած անձնուէր ծառայութիւնները իրականապէս
մատուցանելէ, Հանրութեան Դատարանին, ապագայ
սերունդին և անաչառ Պատմութեան առջև իրաւամբ
խոստմնագրուժ և պատասխանատու պիտի հանդիսանաք։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՍՌ-ԱՀՄ ՍՍՀ

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ

կը ստանձնէ ամէն տեսակ տպագրական գործեր, գիրք, տետրակ հարսանեկան հրաւէր, ցուցակներ ընկերագրեր, մանազդ, եղլի, եղլի Յանձնարարութիւնք կը կատարուին խնամքով, փութով եւ գեղեցիկ գիներով:

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ կեդրոնացեալ է թէ՛ Փալագաշեան աշխատասիրութեանց եւ թէ՛ ուրիշ կարգ մը հեղինակաց գործերուն: Դասական, գիտական, վիպական եւ այլ ամէն տեսակ գրքերու վրայ յանձնարարութիւնք կը կատարուին ճշդութեամբ, փութով եւ խնամքով:

Մեծարանակ զնողներուն մասնաւոր զեղչ

ՀԱՍՑԷ.

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Մեծ Նոր խան, վերի յարկ. թիւ 55

Կ. ՊՈԼԻՍ

ԳԻՆ 60 ՓԱՐԱ

1-2

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ

կը ստանձնէ ամէն տեսակ տպագրական գործեր, գիրք, տետրակ, հարսանեկան հրաւէր, ցուցակներ, ընկերագրեր, մանրագր, եւլն, եւլն: Յանձնարարութիւնք կը կատարուին խնամքով, փութով եւ ցուցիչ գիներով:

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ Կեդրոնատեղին է թէ՛ Փալագաշեան աշխատասիրութեանց եւ թէ՛ ուրիշ կարգ մը հեղինակաց գործերուն: Դասական, գիտական, վիպական եւ այլ ամէն տեսակ գրքերու վրայ յանձնարարութիւնք կը կատարուին ճշդութեամբ, փութով եւ խնամքով:

Մեծագանակ զեղչերուն մասնաւոր գեղչ:

ՀԱՍՑԷ՝

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Մեծ Նոր խան, վերի յարկ. թիւ 55

Կ. ՊՈԼԻՍ

ԳԻՆ **60** ՓԱՐԱ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0163195